

ԴԱՍ 1

ՓԱՍՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀՌԵՏՈՐԻԿՎԱ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: ՀԻՄՆԱՐԱՐ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

ՍՈՏԻՎԱՅՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ (կարող եք գտնել հեռաուսուցման փաթեթի կրիչում)

Ցուցումներ



Մինչև 15 րոպե

Այս դասի առաջին մասում Ձեզ հետ կվերլուծենք

- մասնագիտական և ընդհանրապես մտավոր գործունեության ընթացքում փաստարկման և հոետորական հմտությունների կարևորության հարցը,

կդիտարկենք՝

- պատմության ընթացքում դատական հոետորիկայի զարգացման հիմնական փուլերն ու դրանց առանձնահատկությունները,
- արդարադատության համակարգի բարեփոխման ներկա փուլում կարևորվող որակները:

Ուշադրությամբ կարդացեք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցեք հաջորդ մասերին /հնքնաստուգիչ հարցեր, առաջադրանք/:



Մինչև 105 րոպե

Երկրորդ մասում կուսումնասիրենք փաստարկման և հոետորիկայի հիմնարար հասկացությունները, դրանց սահմանումները, կվերլուծենք փաստարկման և հոետորիկայի հիմնահարցերի հետազոտման հասարակական նախադրյալները, կծանոթանանք այդ հիմնահարցերի հետազոտմամբ զբաղվող առանձին դպրոցների և ուղղությունների ընդհանուր բնութագրերին, հոետորիկայի ավանդական և ժամանակակից

**1.1. ՓԱՍՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՀՌԵՏՈՐԱԿԱՆ
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ: ԴԱՏԱԿԱՆ
ՀՌԵՏՈՐԻԿԱՅԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՓՈՒԼԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ժամանակակից մարդն իր գիտակից գործունեության մեծ մասն անցկացնում է հասարակության այլ անդամների հետ շփման գործընթացներում: Անկախ նրանից՝ այդ գործունեությունը կրում է մասնագիտական, հասարակական, քաղաքական, պաշտոնական, թե կենցաղային բնույթ: Ուստի, եթե *մեր գործունեության զգալի մասը կազմող հաղորդակցումն* արդյունավետ է, նպատակային, խնայողական, ապա շահում է մեր գործունեությունն ընդհանրապես: Եվ ընդհակառակը, հաղորդակցական հմտությունների պակասը, այդ ոլորտում տեղ գտած սխալներն ու թերությունները բացասաբար են անդրադառնում անհատի գործունեության արդյունավետության վրա:

Մեր երկրում ընթացող իրավական և դատական բարեփոխումները, իրավական գործընթացների նկատմամբ հանրային ուշադրության ու հետաքրքրության շարունակական աճը նոր պահանջներ են ներկայացնում դատավորներին, դատախազներին ու փաստաբաններին: Մասնագիտական գիտելիքներին ու հմտություններին զուգահեռ ավելի ու ավելի են կարևորվում խոսքի մշակույթը, տպավորիչ ու համոզիչ ելույթ ունենալու կարողությունը, հոետորական հմտությունները:

Քաղաքակրթության զարգացման ընթացքում փոփոխվել են դատական գործընթացի դերակատարների և արարողակարգի նկատմամբ պահանջները: Նույնը պետք է ասել նաև *դատական հրապարակային*

Մտովի առանձնացրեք մի քանի հաղորդակցական պահանջ, որոնք առաջացել են Ձեր մասնագիտական գործունեության ընթացքում:



խոսքի՝ հոետորական արվեստի հնագույն ձևերից մեկի մասին: Ամեն մի պատմական ժամանակաշրջան, ամեն երկիր ու ժողովուրդ, հասարակական կյանքի պայմաններով թելադրված, իր առանձնահատկություններն ու փոփոխություններն է բերել այդ բնագավառ:

Օրինակ, եթե հին **սոփեստները** գտնում էին, որ դատական ճառի ուժեղ կողմը գործընթացի մասնակիցների մոտ համակրանքի, հակակրանքի, գայրույթի կամ էլ ոգևորության զգացմունքներ արթնացնելն է, ապա մ.թ.ա. 4-րդ դարի հռչակավոր հույն փիլիսոփա Արիստոտելը համարում էր, որ այդ զգացմունքներն ավելի շատ դատավորներին են վերաբերում, քան քննվող գործին: Նա գտնում էր, որ դատարանում գայրույթի, կարեկցանքի կամ նախանձի զգացմունքներ առաջացնելը նույնն է, թե «ոմն մեկը ծոի այն քանոնը», որով պետք է չափումներ կատարի: Արիստոտելը դատական խոսքի ուժեղ կողմը համարում էր ապացուցողականությունը և տրամաբանորեն փաստարկվածությունը [Аристотель 2007: 84]:

Ուշադրություն դարձրեք սոփեստների և Արիստոտելի քննությունների տարբերություններին:

Հին Հռոմում դատական ճարտասանները ևս փնտրում էին շարադրանքի տրամաբանական կանոնավորությունն ու հուզական ներգործությունը արդյունավետորեն համադրելու եղանակներ: Նրանք էական կարևորություն էին տալիս դատական ճառի *կառուցվածքին՝ կոմպոզիցիային*: Ոմանք ճառի կառուցվածքում առանձնացնում էին երեք (ներածություն, հիմնական մաս, ամփոփում), ոմանք՝ չորս¹ կամ հինգ², ոմանք էլ՝ վեց³ հիմնական մասեր:



¹ Ընդհանրապես հոետորական արվեստի զարգացման, ինչպես նաև դատական ճառի կոմպոզիցիոն լուծումների մշակման գործում էական էր հին հույների ազդեցությունը: Օրինակ, դեռևս մ.թ.ա. 5-4-րդ դարերի հույն ճարտասան, փիլիսոփա Իսոկրատեսը մշակել էր հոետորական ստեղծագործության չորս հիմնական բաժիններից բաղկացած կոմպոզիցիա, որը բավական տարածում գտավ նաև հին հռոմեական ճատասանական դպրոցներում՝ 1) ներածություն, որի նպատակը ներկաների ուշադրության գրավումն ու բարյացակամ վերաբերմունքի ապահովումն էր, 2) հիմնական նյութի համոզիչ շարադրանքը, 3) հակառակորդի փաստարկների հերքումն ու սեփական դրույթների փաստարկումը, 4) վերջաբանը, որն ամփոփում և ի մի էր բերում նախորդ շարադրանքը:

Եթե 11-15-րդ դարերի դատական փաստաբանների ելույթները ներթափանցված էին կրոնական բովանդակությամբ, հագեցած էին դավանաբանական **փաստարկներով**, Սուրբ գրքից ու կրոնական տեքստերից մեջբերումներով, ապա հետագայում դատական ճառերն աստիճանաբար ազատվեցին այդ ոճից՝ ձեռք բերելով ավելի ու ավելի աշխարհիկ բնույթ: Վերածննդի ժամանակահատվածում վերստին աճում էր ինչպես հռոմեական իրավունքի, անպես էլ հունահռոմեական ճարտասանական (հռետորական) արվեստի հեղինակությունը:

Դատական ճարտասանության եվրոպական ավանդույթների զարգացման գործում էական դեր ունի 17-19-րդ դարերի ֆրանսիական դատական ճարտասանության դպրոցը⁴: Դրա ձևավորման համար կարևոր նախադրյալ հանդիսացավ Ազգային ժողովի 1791 թ. համապատասխան ակտը, որով հիմնվեց երկրայինների դատարանը և ամրագրվեց քրեական գործերի քննության մրցակցային ձևը: Ռուսաստանում դատական համակարգի համանման բարեփոխում իրականացվեց 1864 թ.: 19-20-րդ դարերի ռուսական դատակական ճարտասանների փառանգի⁵ ձևավորման գործում զգալի է դատական ճարտասանության

Փորձեք հասկանալ, թե ինչու դատական ճառերն ազատվեցին սուրբ գրքերից արվող մեջբերումներից:



² 1) Ներածություն, 2) գործի հանգամանքների վերլուծություն, 3) սեփական տեսակետի օգտին փաստարկների ներկայացում, 4) ընդդիմախոսի փաստարկների հերքում, 5) ամփոփում:

³ Իր ժամանակակիցների կողմից հռոմեական դատական ճառասանների «արքայի» տիտղոսին արժանացած մ.թ.ա. 1-ին դարի նշանավոր հռետոր Մ. Տ. Ցիցերոնը մշակել էր դատական ճառի կոմպոզիցիա, որն ապահովում էր նյութի առավելագույնս դյուրին ըմբռնում: Ըստ նրա՝ արդյունավետ ելույթը պետք է բաղկացած լինի վեց հիմնական մասերից՝ 1) ներածություն, որը պետք է կենտրոնացնի ունկնդիրների ուշադրությունը և համակրանք առաջացնի հռետորի նկատմամբ, նախապատրաստի նրանց հռետորի կողմից առաջարկվելիք որոշմանը, 2) Partitio՝ ելույթի պլան, որտեղ ներկայացվում են պաշտպանության հիմնական դրույթները, և առաջ է քաշվում թեզիսը, 3) Narratio՝ գործի հանգամանքների շարադրանք-վերլուծություն՝ պատմություն, թե ինչպես ու ինչ հանգամանքներում է կատարվել հանցագործությունը, 4) Probatio՝ ելույթի ամենակարևոր՝ ապացույցների շարադրման մասը: Այստեղ հռետորը ներկայացնում էր երկու տեսակի փաստարկներ: Դրանց մի մասը հասցեագրված էր ունկնդիրների բանականությանը, իսկ մյուս մասն ուղղված էր նրանց հուզական աշխարհին, 5) Repetitio՝ վճռորոշ և կարևոր փաստարկների կրկնություն, որպեսզի դրանք ավելի լավ տպավորվեն ներկաների գիտակցության մեջ, 6) Peroratio՝ արդյունքների ամփոփումն է և եզրահանգումների ներկայացումը [Տե՛ս Ивакина 2007: 31-32]:

⁴ Առավել նշանավոր դեմքերից են ֆրանսիական ակադեմիայի անդամ Լուի դե Սասին, Լոագո դե Մոլեոնը, Ժյուլ Ֆավրը, Շե դ'Էստ Անժը, Անդրե և Ֆիլիպ Դյուպենները, Ֆերնանդ Լաբորին, արքարադատության նախարար Իսահակ Ադոլֆ Կրեմյեն և այլք:

⁵ Առավել ազդեցիկ ներկայացուցիչներից են Ամատոյի Կոնին, Ֆեոդոր Պլևակոն, Նիկոլայ Կարաբ-չևսկին, Կոնստանտին Արսենևը, Պյոտր Պորոխովչիկովը (Պ. Սերգեյչ), Վլադիմիր Մպասովիչը, Կոնստանտին Խարտուլարին, Ալեքսանդր Ուռուսովը, Նիկոլայ Կոիլենկոն և այլք:

Ֆրանսիական ավանդույթների ազդեցությունը:

Հայ փիլիսոփայական, իրավական ու քաղաքագիտական միտքը ևս հայտնի է մեզ հետաքրքրող հարցերի ոլորտում ուրույն ներդրում ունեցած խոշորագույն դեմքերով՝ Եզնիկ Կողբացուց (4-5-րդ դդ.) ու Դավիթ Անհաղթից (5-6-րդ դդ.) մինչև Մխիթար Գոշ (12-13-րդ դդ.) և Սմբատ Գունդստարլ (13-րդ դ.): Ինչ վերաբերում է հայոց պատմության նորագույն շրջանին, ապա իրավաբան-փաստաբանների, **հռետորիկայի ու փաստարկման** տեսաբանների շարքում պետք է առանձնացնել արևմտահայ գրող, քաղաքական գործիչ, իրավաբան-փաստաբան Գրիգոր Չոհրապին (1879-1915), ով փաստաբանական գործունեություն էր իրականացնում ոչ միայն Օսմանյան կայսրությունում, այլև եվրոպական երկրներում, իրավաբան-փաստաբան Գրիգոր Չուբարին (1888-1962), ով ԵՊՀ հիմնադիրներից և առաջին դասախոսներից մեկն էր, հայտնի է որպես ՀԽՍՀ առաջին սահմանադրության համահեղինակ, պետական գործիչ, Եղիշե Չարենցի դատապաշտպան, ամենայն հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի իրավական խորհրդատու, իրավաբան Սուրեն Արևշատյանին (1896-1972), ով Հայաստանում հռետորիկայի առաջին բուհական ձեռնարկի [տե՛ս Արևշատյան Ս.Ղ., Հռետորական արվեստի հիմունքները: Եր., 1961] հեղինակն է, փաստարկման երևանյան դպրոցի հիմնադիր ակադեմիկոս Գեորգ Բրուտյանին (ծնվ. է 1926թ.):

Այնուհանդերձ, վերջին հարյուրամյակների ընթացքում պատմական հանգամանքների բերումով հայ իրականության վրա առավել զգալի է եղել ռուսական դատական ինստիտուտների մոդելի և դատական ճարտասանության ավանդույթների ազդեցությունը:

19-րդ դարի և 20-րդ դարասկզբի Ռուսաստանում դատական հռետորները խոսքի մեջ, որպես կանոն, քիչ



Փորձեք հիշել այլ հայ իրավաբան հռետորների անուններ:



Էին օգտագործում իրավաբանական տերմիններ և ստանդարտ արտահայտություններ: Ավելի հաճախ նրանք ատենակալներին դիմում էին «ինչպես գրողը՝ հանրությանը»: Դատական ելույթները հագեցած էին գեղարվեստական արտահայտչամիջոցներով ու համապատասխան հուզական ֆոնի ձևավորմանը միտված հնարներով:

Խորհրդային շրջանում համարվում էր, որ «խոսքը պճնող յուրաքանչյուր ավելորդություն, որի նպատակն արտաքին էֆեկտն է, կարող է միայն վնասել գործին և խանգարել հասնելու նպատակին» [Ивакина 2007: 31-32]: Խորհուրդ էր տրվում խոսել սուսկ իրավաբանական հասկացություններով ու օրենքի լեզվով: Դատական ճարտասանների խոսքը ստանդարտացված էր և հարուստ «քարացած» արտահայտություններով:

Մեր ժամանակներում, սակայն, կրկին զգալի է վառ, ազդեցիկ ու տպավորիչ դատական խոսքի անհրաժեշտությունը: Չուտ մասնագիտական իրավաբանական գիտելիքների կողքին էապես կարևորվում են փաստարկման, համոզման կարողությունները, վայելուչ ու ճարտար խոսքի հմտությունները: Դատաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ ժողովրդավարական ռեժիմի պայմաններում վերստին կարևորվում է արդարադատության գործընթացի և վերջնարդյունքի ընկալելիությունը, հասկանալիությունը, ընդունելիությունը լայն հանրության կողմից: Դրա բացակայության պարագայում հնարավոր չի լինի ապահովել դատական գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը: Ընդ որում, դրան նպաստում են ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաները, որոնք հնարավորություն են տալիս արագորեն և ամբողջկանոթեն տարածել դատական վարույթի մանրամասները:

Փորձեք հիմնավորել դատական խոսքի վառ և տպավորիչ լինելու անհրաժեշտության գաղափարը:

**1.2. ՓԱՍՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՀՌԵՏՈՐԻԿԱՅԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ**



Փաստարկման և **ճարտասանության** խնդիրների հետազոտման հիմքերը դրվել են մարդկային քաղաքակրթության վաղ շրջանում՝ հին հունական, հնդկական, չինական փիլիսոփայության տարբեր համակարգերի ու ուսմունքների շրջանակներում:

Պատմությունը վկայում է, որ **փաստարկման** ու **հոետորիկայի** հարցերի ուսումնասիրման բնագավառում ձեռքբերումներն ու հաջողություններն առավել շոշափելի են եղել, տեսական հարուստ ժառանգություն է ձևավորվել այնտեղ, որտեղ տեսական գիտելիքի զարգացման որոշակի մակարդակին զուգահեռ առկա են եղել նաև նպաստավոր հասարակական-քաղաքական պայմաններ, հասարակայնորեն կուտակված հարուստ փորձ և պահանջմունքներ: Խոսքը նախ և առաջ *հանրային կառավարման ժողովրդավարական հաստատությունների ու քննադատարգերի, բազմակարծության, հրապարակային քննարկումների ու բանավեճերի ավանդույթի* մասին է: Դա վերաբերում է թե՛ հին հունահռոմեական մշակույթին, թե՛ 19-րդ դարակեսի Եվրոպային, թե՛ 20-րդ դարակեսից ի վեր քաղաքակիրթ աշխարհում տեղի ունեցող գործընթացներին:

Ներկայումս գոյություն ունեն միջազգային ճանաչում ունեցող մոտ երկու տասնյակ բուհական և ակադեմիական կենտրոններ, որոնք զբաղվում են փաստարկման, արդյունավետ հաղորդակցման, հոետորիկայի հիմնախնդիրների և համապատասխան տեխնոլոգիաների հետազոտմամբ: Դրանցից մեկն էլ *փաստարկման երևանյան դպրոցն* է [տե՛ս Հովհաննիսյան Հ.Հ., Փաստարկման հարցերը հայ փիլիսոփա-

յական մտքի պատմության համատեքստում //Գիրք 2, Փաստարկման երևանյան դպրոց, Եր., 2009, էջ 199-218], որի հիմնադիրը ակադեմիկոս Գեորգ Բրուտյանն է:

Առավել տարածված հայեցակետի համաձայն՝ **փաստարկումը** «կշռադատության այնպիսի եղանակ է, որի ընթացքում առաջադրվում է որևիցե դրույթ՝ որպես ապացուցման թեզիս, քննարկվում են դրա ճշմարտացիության օգտին բերված փաստարկներն ու հնարավոր հակափաստարկները, արժեքավորվում են ինչպես ապացուցման, այնպես էլ հերքման թեզիսն ու հիմքերը: Հերքվում է հակաթեզիսը, այսինքն՝ ընդդիմախոսի թեզիսը, ապացուցվում է թեզիսը: Ինչպես ապացուցողի, այնպես էլ ընդդիմախոսների [և լսարանի - Հ.Հ.] մոտ համոզմունք է ձևավորվում թեզիսի ճշմարիտ և հակաթեզիսի սխալ լինելու վերաբերյալ, հիմնավորվում է թեզիսի ընդունման նպատակահարմարությունը» [Брутян 1984: 7]: Այս ամենը հետապնդում է մեկ նպատակ՝ ընդդիմախոսներին դարձնել փաստարկողի համախոհը և փաստարկվող դրույթից բխող համապատասխան գործողությունների մասնակիցը [տե՛ս Брутян Г. А., Очерк теории аргументации, Եր., 1992 15]:

Փաստարկման հիմնական բաղադրատարրերն են *տրամաբանական կառույցները (ապացուցումն ու հերքումը), համոզումը, փաստարկման լեզուն, պերճախոսությունը, հիմնավորումը, արժեքավորումը, էթիկետը*: Դրանք վերաբերում են գիտելիքի տարրեր բնագավառների: Ապացուցումն ու հերքումը ուսումնասիրվում են տրամաբանության կողմից, համոզումը՝ հոգեբանության, պերճախոսությունը՝ հոետորիկայի տեսության և այլն:

Հոետորիկա արտահայտությունն ունի հունական ծագում. orare - խոսել, միտքը շարադրել և



Հատուկ ուշադրություն դարձրեք փաստարկման սահմանմանը:



rhetorike - տպավորիչ, ճարտար խոսելու, ելույթ ունենալու արվեստ բառերից: Հայերենում հռետորիկայի առավել կիրառական համարժեքը **ճարտասանությունն** է:

Հռետորիկայի ձևավորման գործում մեծ ավանդ ունեն Հին Հունաստանի **լոգոգրաֆներն** (հունարեն λόγος (logos) - բառ, միտք և γράφω (grapho) - գրել) ու **սոփեստները**, որոնք դրամի դիմաց գրում էին պաշտպանական ու մեղադրական ճառեր, քաղաքական գործիչներին սովորեցնում էին հրապարակային ելույթներ ունենալու ու բանավիճելու հմտություններ: Դատական ճարտասանության առաջին նշանավոր դեմքերից ու տեսաբաններից էին Գորգիասը, Լիսիասը, Իսկրատը, Տրասիմաքոսը, Դեմոսթենեսը:

Մնուրանալի է մ.թ.ա. 5-րդ դարի հույն փիլիսոփա Սոկրատեսի դերը, որը սոփեստների՝ ցանկացած վեճում հաղթելու ռազմավարությանը հակադրեց իր **մաևտիկան** (բառացի՝ տատմերական (մանկաբարձուհու) արվեստ)՝ բանավեճերի միջոցով ճշմարտության բացահայտման, նոր գիտելիքի հայտնագործման, խնդրի լուծումը փնտրելու արվեստը:

Հռետորիկայի առավել հետևողական փիլիսոփայական հայեցակարգ մշակել է Արիստոտելը (մ.թ.ա. 4-րդ դար)՝ հռետորիկան սահմանելով որպես **դիալեկտիկային** մոտ՝ լսարանի առջև համոզիչ ու տպավորիչ ելույթ ունենալու արվեստ, գիտելիքի ոլորտ, որի նպատակն է մշակել խնդրո առարկայի վերաբերյալ ապացուցման, հերքման ու համոզման արդյունավետ եղանակներ [Аристотель 2007: 83]:

Արիստոտելն առանձնացրել է *հաղորդակցման դիալեկտիկական, սոփեստական և էրիստիկական* եղանակները: Դիալեկտիկական գրույցներն ու բանավեճերն ունեն կառուցողական բնույթ, դրանց

Հատուկ ուշադրություն դարձրեք հաղորդակցման նշված եղանակների տարբերություններին:



նպատակը խնդրի լուծման համատեղ որոնումն է, նոր գիտելիքի ու ճշմարտության հայտնաբերումը: Սովետականի նպատակը իմաստունի տպավորություն թողնելն է, իսկ Էրիստիկականինը՝ հաղթանակն ամեն գնով [Аристотель 1978: 55]: Հույն իմաստասերն իր աշխատություններում ներկայացրել է վերջին երկուսի ընթացքում կիրառվող ապակառուցողական տեխնոլոգիաներ, վերհանել դրանց խոցելի կողմերը՝ միաժամանակ առաջարկելով հաղորդակցման արդյունավետությունը երաշխավորող տոպեր (կանոններ):

Տեսական հոետորիկային գուգահեռ Հին աշխարհում գոյություն ունեւ նաև այսպես կոչված դպրոցական (կիրառական) հոետորիկա, որի համակարգողը համարվում է 1-ին դարի հռոմեացի մտածող Մարկուս Ֆարիուս Քվինտիլիանուսը, ով հոետորիկան դիտարկում էր որպես պերճախոսության արվեստ:

Մինչև 19-րդ դարի կեսերը հոետորիկայի սահմանումները դուրս չէին գալիս Արիստոտելի և Քվինտիլիանուսի մեկնաբանությունների շրջանակներից: Սակայն ոչ դասական և մտածելակերպի շրջանակներում 19-րդ դարի կեսերից ի վեր դասական հոետորիկայի հիմնախնդիրների ու ավանդույթների վերաիմաստավորման և *նեոհոետորիկայի* զարգացման արդյունքում ձևավորվեցին նոր հայեցակարգեր, ի հայտ եկան նոր միտումներ:

Տվյալ դասընթացի շրջանակներում կառանձնացնենք **հոետորիկայի** ըմբռնման երեք հայեցակարգեր՝ *ավանդական* (դասական կամ արիստոտելյան), *ժամանակակից* (որի առավել տիպական հայեցահարգեր են մշակվել բելգիացի փիլիսոփա Խայիմ Գերեյմանի, ակադեմիկոս Գեորգ Բրուստյանի գործերում) և *պրագմատիկ* (Հենրի Չոնսթոն, Կարսթեն Բրեդեմայեր):

Հոետորիկայի ավանդական-արիստոտելյան



ըմբռնմանը բնորոշ են երկու կարևոր առանձնահատկություններ: Նախ, հոետորիկան դիտարկվում է որպես լսարանի առաջ համոզիչ ելույթ ունենալու արվեստ: Եվ երկրորդ, հոետորական հնարները կառուցվում են հիմնականում տրամաբանական մոդուսների (լատ. modus - եղանակ, մտահանգման ձև) և կանոնների հիման վրա:

Հոետորիկայի ժամանակակից ըմբռնումները ընդլայնում են ինչպես դրա գործառնական տիրույթը՝ մարդ-լսարան մոդելին ավելացնելով նաև մարդ-մարդ մոդելը (երկխոսություն, բանակցություն, բանավեճ և այլն), այնպես էլ հոետորական հնարների գինանոցը՝ տրամաբանականից զատ ընդգրկելով նաև արտատրամաբանական՝ հոգեբանական, գեղագիտական, պերճախոսական, էթիկական, արարողակարգային և այլ միջոցները, ընդ որում՝ ծանրության կենտրոնը հաճախ տեղափոխելով դեպի արտատրամաբանականը, մասնավորապես շեշտադրելով հոգեբանական ազդեցության ձևերը:

Պրագմատիկ ըմբռնումներում փաստարկման և ճարտասանական համակարգերում տրամաբանական-արտատրամաբանական միջոցների առաջնայնության խնդիրը ստանում է իրավիճակային լուծումներ՝ երբեմն էլ խիստ պայմանական դարձնելով թույլատրելիի և անթույլատրելիի սահմանը:

Նշեք հոետորիկայի երեք հայեցակարգերի նմանություններ և տարբերություններ:

Այսպիսով, այս դասի ընթացքում դիտարկեցինք՝

- հաղորդակցման գործընթացներում փաստարկման և հոետորիկայի հմտությունների կարևորությունը,

ընդգծեցինք՝

- պատմության ընթացքում դատական հոետորիկայի զարգացման հիմնական փուլերն ու դրանց առանձնահատկությունները, այդ առումով՝ արդարադատության համակար-

գի բարեփոխման ներկա փուլի պահանջները:

Այս դասի ընթացքում Դուք ծանոթացաք նաև՝

- **փաստարկման և հոետորիկայի** հիմնարար հասկացություններին,
- **դրանց սահմանումներին,**
- փաստարկման և հոետորիկայի հիմնահարցերի հետազոտմամբ զբաղվող առանձին դպրոցների և ուղղությունների ընդհանուր բնութագրերին,
- հոետորիկայի ավանդական և ժամանակակից ըմբռնումներին ու մեկնաբանություններին:



Վերհիշելով համոզվեք, որ յուրացրել եք հիմնական հասկացությունները: